Ձորաստան

Բնակչություն՝ 73

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1210 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Գյուղը նախկինում կոչվում էր Ախտախանա, հետագայում՝ Խլաթաղ, Ձորաստան է անվանափոխվել 1936թ-ին: Ձորաստանցիների նախնիների մի մասը այստեղ են եկել Իրանի Վինա գյուղից՝ Ղարաբաղից: Գյուղի շրջակայքում կան միջնադարյան ամրոցի ավերակներ, հին գյուղատեղիներ, գերեզմանոցներ: Գյուղի կենտրոնում գտնվող եկեղեցին կառուցվել է 1830 թ-ին, իսկ 2001թ-ին ՝ գյուղապետարանի նախաձեռնությամբ վերանորոգվել է:
Ձորաստանում է ծնվել Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի անդամ, 1918-20 թթ. Զանգեզուրյան հերոսամարտի կազմակերպիչներից մեկը համարվող Գեդեոն Տեր-Մինասյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3331 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր 1545 հա, որից՝
- վարելահող՝ 76 հա, խոտհարք՝ 15 հա, արոտ՝ 492հա, այլ հողատեսք՝961 հա
- բնակավայրերի հողեր՝ 28 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 1749 հա, որից անտառածածկ՝ 1626 հա
- ջրային հողեր՝ 6 հա